ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3

ԲԱՀ-ԷԱՃԱՊՁԲ-18/2 ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆԱՆՇՄԱՆ ՀԱՐՑՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

ք. Երևան 28.12.2018թ.

2018թ-ի դեկտեմբերի 28-ին ժամը 11-00-ին, Բիզնես Արմենիա Հիմնադրամի գրասենյակում՝ ՀՀ, ք. Երևան, Մ. Մկրտչյան 5 հասցեում, տեղի ունեցավ ԲԱՀ-ԷԱՃԱՊՁԲ-18/2 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ՝ հանձնաժողով) նիստը: Հանձնաժողովի նիստին մասնակցում էին հանձնաժողովի հետևյալ անդամները՝

նախագահ՝ Արմեն Ախիյան

անդամներ՝

Նունե Խաչատրյան

Նելլի Ժամագործյան

Աննա Ղուկասյան

Քարտուղար ՝

Հասմիկ Ղահրամանյան

Բացակայում է ՝ Աիդա Կոստանդյան

Հաշվի առնելով, որ հանձնաժողովի կազմը բաղկացած է հինգ անդամից, իսկ հանձնաժողովի նիստին մասնակցում էին հանձնաժողովի 2/3-ը , հետևաբար՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի N 526-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի 26-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն, հանձնաժողովի նիստը համարվեց իրավազոր և հայտարարվեց բացված:

Հանձնաժողովի նիստը նախագահում էր Արմեն Ախիյանը, իսկ քարտուղարն էր՝ Հասմիկ Ղահրամանյանը:

ՕՐԱԿԱՐԳ

1. ԲԱՀ-ԷԱՃԱՊՁԲ-18/2 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի մասնակցի/ների/ կողմից ներկայացված հայտի/երի/՝ հրավերի պահանջներին համապատասխանության գնահատման արդյունքների հաստատման մասին:
2. ԲԱՀ-ԷԱՃԱՊՁԲ-18/2 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի ընտրված մասնակից հայտարարելու մասին:
3. Պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը հաստատելու մասին:

1. ԲԱՀ-ԷԱՃԱՊՁԲ-18/2 ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆԱՆՇՄԱՆ ՀԱՐՑՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՄԱՍՆԱԿՑԻ/ՆԵՐԻ/ ԿՈՂՄԻՑ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ՀԱՅՏԻ/ԵՐԻ/՝ ՀՐԱՎԵՐԻ ՊԱՀԱՆՋՆԵՐԻՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ

Զեկուցեց քարտուղար Հասմիկ Ղահրամանյանը՝ հայտնելով, որ ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կողմից տրամադրվել է ԲԱՀ-ԷԱՃԱՊՁԲ-18/2 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգով 1-ին տեղը զբաղեցրած մասնակցի ֆինանսական միջոցների հարցման մասին տեղեկատվություն :

Հանձնաժողովն արձանագրեց, որ.

ԲԱՀ-ԷԱՃԱՊՁԲ-18/2 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգով 1-ին և 4-րդ չափաբաժինների մասով 1-ին տեղը զբաղեցրած մասնակցի Այ-Թի Պլազա ՍՊԸ -ի և ՆՈՎԱ ԹՐԵՅԴ ՍՊԸ-ի հայտերը ճանաչել հրավերի պահանջներին բավարար:

Որոշվեց՝

1. Հասմիկ Ղահրամանյանի կողմից ներկայացված տեղեկատվությունն ընդունել ի գիտություն:
2. Հաստատել ԲԱՀ-ԷԱՃԱՊՁԲ-18/2 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի մասնակցի կողմից ներկայացված հայտի՝ հրավերի պահանջներին համապատասխանության գնահատման հետևյալ արդյունքները

1-ին չափաբաժին -Այ-Թի Պլազա ՍՊԸ ՝ բավարար,

4-րդ չափաբաժին ՆՈՎԱ ԹՐԵՅԴ ՍՊԸ բավարար

Կողմ՝ 4
Դեմ՝ 0

2. ԲԱՀ-ԷԱՃԱՊՁԲ-18/2 ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆԱՆՇՄԱՆ ՀԱՐՑՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԸՆՏՐՎԱԾ ՄԱՍՆԱԿԻՑ ՀԱՅՏԱՐԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Որոշվեց՝

ԲԱՀ-ԷԱՃԱՊՁԲ-18/2 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգով ընտրված մասնակից հայտարարել 1-ին չափաբաժնի մասով Այ-Թի Պլազա ՍՊԸ –ին, 4-րդ չափաբաժնի մասով ՆՈՎԱ ԹՐԵՅԴ ՍՊԸ ին :

Կողմ՝ 4
Դեմ՝ 0

3. ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԿՆՔԵԼՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՄԱՍԻՆ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՏԵՔՍՏԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հանձնաժողովի քարտուղար Հասմիկ Ղահրամանյանը ներկայացրեց պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստի նախագիծը:

Որոշվեց՝

1. Հաստատել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը՝ համաձայն հավելվածի:

Կողմ՝ 4
Դեմ՝ 0

Հանձնաժողովի նախագահ՝

Արմեն Ախիյան _____

Հանձնաժողովի անդամներ՝

Նունե Խաչատրյան _____

Աիդա Կոստանդյան _____

Նելլի Ժամագործյան _____

Աննա Ղուկասյան _____

Հանձնաժողովի քարտուղար՝

Հասմիկ Ղահրամանյան _____